

պարզամիտն հլուակնու թեամբ ձերով, զի 'ի ժամանակի միրկերոյ բնութեան հեղեղացն անասան կացլիք : Այժմէն պարտիք հիմն դնել ձերոց երիտասարդ կենացն , այրութեան հասակի և ծերութեան և հանդերձելոյն իսկ : Այժմէ ոչ կանխեալ տնկիցէք զառաքինութեան բոյս՝ ոչ երբէք ծառացեալ նոյին 'ի հովանին վայելիցէք 'ի սոթաժամու փորձանաւոր աւուրցն և ջերմաջերմ կրից , և ոչ գտլիք հանգիստ 'ի խոնջ վաստակեալ հասակին : Ամենայնի ժամանակ է սերմանելոյ և հնձելոյ . առանց սերման , չիցեն և հունձք : Ահա սահեալ էանց զձեօք տղայութեան տխեղծ անբանական հասակ . թէպէտ 'ի մանկութեան ցարդ , այլ մանուկ զոլ մտավարժ և ոգւոյ բարւոյ հանդիպել՝ անվրէպ ի մաստութեան է սկիզբն և նշանակ : Արջանիկ ամբ և ըղձագոյն ժամանակ , մինչև 'ի վերայ հասեալ հոգք և տաղտապանք զնիւթական կենաց , մինչև զգացեալք կարիք մարդկութեան խոչք և խուժք զօրաւորք : Ահա ձեզ ասպարէզ արութեանց , յորում 'ի վարձ և 'ի յաղթանակ կշռին ձեզ առաքինութեց գեղեցիկ շարք , իմաստութիւն հանձարոյ , համբաւ բարի , սիրելի և ցանկալի լինել և Աստուծոյ և մարդկան . և զայս և զայն կեանս յաւէտ երջանկացուցանել :

Երացարուք առաքինիք , չթողուլ անցանել զձեօք և ոչ վայրկեան մի ժամու , յորմէ կազմին և ժամք և աւուրք և եօթնեակք և ամիսք և ամբ և ողջոյն իսկ ընթացքամաց դաստիարակութեան ձերոյ , և ապագայ կեանք : Օ՛ր մի լիցի ձեզ 'ի վախճանի ամացն զտխուր աչադարձուցեալ 'ի թիկունս չտեսանել այլինչ քան զկորուստ ժամանակի անպրտուղ և անշահ , ամօթ ծանր և ապաշաւ վայրապար : Այլ ակնկալութիւն յետս դարձի , և ոչ կրկին ընդ նոյն անցանելոյ յոյս : Այլ քաւ յինէն , որդեակք , զայսպիսիս զձէնջ խիթալ , ուր տարեկան ճիգն ձեր և փոյթ զովելի , ապաւնեացն ամաց հաւատոխ մեզ տայ : Այլ արդէն թուիմ տեսանել զվեցամեան

դաստիարակութեանս ժամանակ 'ի գլուխ հասեալ , և զձեզ քաջահասութե զինչ մարդն իցէ որ 'ի ձեզ բարձեալ տանիք . զինչ գործոց նորա սահման , և զոր խորհուրդ խորհեցաւ զմանէ Տէր : Այնուհետև միտք բարձրախոհք և ոգիք աստուածամերձք , ճշմարիտ քրիստոնեայք և աստուածազաւակք , զառաքինութիւն ընդ լուսաւոր գիտութեան զուգորդեալ հայրենեաց և ընտանեաց ձերոց ընծայեցլիք : Այնուհետև 'ի ձեզ 'ի միտ առցէ աշխարհ թէ մարթ է զգիտութիւն ընդ խոնարհութեան լծորդել . ձեօք հաւաստեսցի թէ չէ յանհնարիցն ընդ աշխոյժ սլատանեկութեան 'ի մի զուգել զխոհական գործունէութիւն . ձեօք տեսցի թէ հայրենասիրութիւն , մարդասիրութիւն և սէր ընկերին քրիստոնէական են առաքինութիւնք . 'ի ձէնջ տգիտութիւն ընդ կանխակալ մնորութեանց տեղի տուեալ փախչիցի , 'ի ձեզ , որդեակք , քրիստոսական կրօն գտցէ իւր նեցուկ և ջատագովս , Աստուած զփառս , և տուն Ախիթարայ զսփոփանս :

Տ . Ա . ՃԱԲ .

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ  
 ԳԱՏՄՈՒԹԻՒՆ

Ղրադաններու վրայ տեղեկութիւն :

Գ . ՊԵՐԳԱՄՈՆ . — Այլմենէս և Ատտաղոս Պերգամայի թագաւորները Արգիտոսի Պտղոմեանց փառացն ու մեծագործութեանցը հաւասարել ջանալով՝ զրատուն մը կանգնեցին որ հին պատմութեանց մէջ շատ երևելի է , և ըստ երեցն Պինիոսի մէջը 200,000 հատոր գիրք կայ եղեր : Ապափայլ Աղաղերրանսո գիտնականը կը պնդէ թէ Պերգամոնի առման ժամանակ այս զրաւտունն ալ այրեր է , բայց Պինիոս և ու

1 Տես երես 169 :

րիչ հեղինակները կ'ըսեն թէ Սարկոս Լ'նասնիտս կղէտպատրային պարգև երէ սակայն Սորաբոն ալ կ'ըսէ թէ իր ատենը , այսինքն Տիբերիոսի ժամանակ , այս գրատունը դեռ Պերգամոն կեցեր էր : Իմաստուններէն ոմանք կ'ըսեն թէ Պլինիոսի ու Սորաբոնի հակառակախօս վկայութիւնները կրնան միաբանիլ թէ որ ենթադրելու ըլլանք թէ Լ'գոստոս , որ կը սիրէր Լ'նատնիոսի շինածը քակել , նորէն Պերգամոն հաստատած ըլլայ այս գրատունը Լ'կտիոնի պատերազմէն ետեւ , զորն որ իր նախանձորդը Լ'քէքսանդրիա փոխադրել տուած էր : Բայց ասիկայ պարզ ենթադրութիւն մըն է :

Դ. ՅՈՒՆԱՍՏԱՆ :— Տրոյիոյ պատերազմէն առաջ Յունաց վրայ ստոյգ ծանօթութիւն մը չի կայ , անկէ ալ ետեւ ինչուան հովերոսի ատենները առասպելներով լեցուն է : Եւրիպիտոսը չի գիտէր Յունացիք շուտով ձանցան գրելու հարկաւորութիւնը , և դիտութիւններն ու դպրութիւնները Լ'տտիկէի մէջ ծաղկեցան , որով շատ չանցաւ զրքերն ալ հոն շատցան : Յունաց պատմութեան մէջ առաջին յիշատակուած գրատունը Պողիկրատ Սամոսացւոյն է , Բրիստոսէ 600 տարի առաջ . Սաղերիոս Սաքսիմոսի ըսածին նայելով Յունաստանի մէջ առաջին հասարակաց գրատունը Պիսիատրատ բռնաւորը կանգնեց Լ'թէնքի մէջ , որով կ'ուզէր ժողովուրդն զբաղեցնել որպէս զի մոռնայ իրեն կորսնցուցած ազատութեան վրայ մտածելը : Լ'յս գրատունս շատ հարուստ էր , որուն մէջ առաջին անգամ հաւաքուած էին հովերոսի դիւցազներգութեանց հագներգութիւնները , և երբոր Բսերքսէս Յունաստանի տիրեց , Լ'թէնքի մէջ ուրիշ գրատուններ ալ կային , զորոնք ամէնն ալ Պարսկաստան փոխադրել տուաւ կ'ըսեն : Բայց Լ'լոս Գելլիոս կ'ըսէ թէ ետքէն Սելևկոս Երկատոր նորէն Լ'թէնացւոց դարձուց այս զրքերը : Կղէտքոս Պղատոնի աշակերտը և հերակլիայի բռնաւորն ալ իրեն մայրաքաղաքը ուրիշ գրատուն կանգ-

նեց : Բազմահմուտն Ղամէրարիոս կը յիշատակէ նաև Լ'սլամէայի գրատունը , իբր հին ատեն երևելիներէն մէկը , և Լ'նգեղոս Սոքքա կ'ըսէ թէ մէջը 20,000 հատորէն աւելի կար : Սասնաւորաց գրատուններուն մէջ առաջինն է Լ'րիստոտելի գրատունը , զորն որ այս իմաստասիրին մահուանէն ետեւ Լ'սպելիոն Գէոս գնեց , և ետքէն Սիզլաստանալով զայն՝ հռովմ փոխադրեց :

Ե. ՀՌՈՎՄ :— Երկար ատեն հռովմայեցւոց գրատունները Յունաց գրատանցը չափ անուն չունէին , և ասոնք երկու տեսակ էին , մէյմը հասարակաց , մէյմըն ալ մասնաւորներու : Լ'առաջինները հասարակապետութեան և կայսրութեան դիւաններն էին , որոնց մէջ օրէնքներն , հրովարտակները՝ և այն , կը պահուէին . սրբազան գրատուններ ալ կային , որ քրմապետներուն , հմայողներուն , տասնապետաց՝ և այն , յանձնուած էին , որոնց մէջ սիբիլաներուն և իրենց կրօնքին վերաբերեալ զրքերը կը պահուէին : Սանաւորաց գրատունները երևելի հռովմայեցիներ կանգնեցին իրենց առանձինն գործածութեան համար , և որոնցմէ շատը ետքէն հասարակաց եղան : Լ'սոնց մէջ առաջինն է անիկայ զորն որ ծերակոյտը հռեգուղոսի ազգատոհմին շնորհեց կարգեգոնի առումէն ետեւ որ բոլոր հռեգուղոսի կարգեգոն գտած զրքերն էին , որոնց մէջ երևելի էր Սարգոն ափրիկեցւոյն երկրագործութեան վրայ 28 հատոր գրածը , որ մէկէն լատիներէն ալ թարգմանուեցաւ : Պաւղոս Եմիլիոս ալ իր գրատունը Սակեգոնիայէն բերաւ , Բրիստոսէ 168 տարի առաջ , Պերսեսոսի յաղթելէն ետեւ . Պլուտարքոս կ'ըսէ թէ Պաւղոս Եմիլիոս այս գրատունը իր որդւոցը մէջ բաժնեց , բայց ընդհակառակն Իսիդորոս յայտնապէս կ'ըսէ թէ հռովմայեցւոց թողուց : Լ'սինիոս Պոլլիոն հռովմայ ընծայ մը ընելու համար ձոխ գրատուն մը հաւաքեց , որ բոլոր իրեն յաղթած երկիրներուն աւարներովը հարստացուց , ու շատ մըն ալ ծանր գնով զրքեր գնեց :

Ըստ հասարակաց շէնքս զարգարեց նաև զխուժեանց ու դարուժեանց մէջ երևելի եղողներուն կենդանագիրներովը: Պլուտարքոսի պատմածիննայելով՝ Վուկուզդոս ալ մեծահարուստ գրատուն մը կանգնեց բազմաթիւ հատորներով և գեղեցիկ զարդերով: Կրոց գեղեցիկ հաւաքում մըն ալ Վարրոն ունէր, որ Հռովմայեցւոց մէջ ամենէն իմաստունն էր: Կիկերոնի գրատունն ալ, որ ետքէն իր բարեկամ Բրտիկոսի գրքերովն ճոխացաւ, նոյն ատենի երևելի գրատուններէն մէկն էր, և Կիկերոն միշտ կ'ըսէ եղեր թէ Կրեսոսի բոլոր գանձերէն ալ վեր կը դնեմ այս գրատունս: Ոչ ինչ նուազ մեծագործ էր Նուլիոս Կեսարին գրատունն ալ, որ երևելոյն Վարրոնի յանձնուած էր: ( ) գոստոս Հռովմայ 721 թուականին Պատաւիոյ գաւիթը հասարակաց գրատուն մը կանգնեց, ուսկից և ոչ քառասուն ալ կ'ըսուէր. և անկէ հինգ տարի ետև ալ Պալատինեան լերան վրայ ուրիշ գրատուն մըն ալ կանգնեց, որուն վրայ նոյն ատենի բանաստեղծները շատ կը խօսին, վասն զի հոն կ'երթան եղեր իրենց ստանաւորները արտասանելու: Տիբերիոս Պալատինեան լերան վրայ առանձինն գրատուն մը կանգնեց, որ ինչուան Վոպիսկոսի ատեն կար: Կերոնի ժամանակ Կապիտոլիոս քերականը Հռովմ գրատուն մը ունէր, որուն մէջ 3000 հատոր գիրք կայ եղեր. ոչինչ նուազ երևելի էին նաև Սիդիոս Բատլիկոսին և կրտսերոյն Պինիոսի գրատունները: Վեսպասիանոս ալ Կեսարու ու ( ) գոստոսի նմանողութեամբ մեծ գրատուն մը կանգնեց խաղաղութեան տաճարին քով: Բայց կայսրութեան ատենի ամենէն մեծ գրատունն է Տրայիանոսին կանգնածը, որ ուղեան կ'ըսուէր, կայսեր Ուլպիոս անունէն: Շատ մատենագիրներ կ'ըսեն թէ Տրայիանոս բոլոր Հռովմայեցւոց տիրած քաղաքներուն մէջ գտած գրքերը Հռովմ բերել և իր շինած գրատունը դնել տուաւ. այս բանս գուցէ կրտսերն Պինիոսի խորհրդովն ըրած ըլլայ, որ իրեն մտե-

րիմն ու ներբողին էր: Սափայել Վուկուզերրանոս կ'ըսէ թէ Տրայիանոս բոլոր ծերակուտին գործքերն ու իշխանաց քաջութիւններն կտաւ ի վրայ գրել տուած էր, և ետքէն ալ փղոսկրով պատել տուաւ: Բսիդորոս և Պոյետիոս մեծ զարմացմամբ կը խօսին Սամմոնիկոսի Սիրէնոսի գրատանը վրայ, որ Կորդիանոս կայսեր դաստիարակն էր: Բոլոր մէջ 62,000 հատոր ընտիր գրքեր կային, յատակը բոլոր սկիզոծ մարմարին պատած էր, պատերն ալ փղոսկրով զարդարած էր, և մէջի դարաններն ու գրակաները բոլորն ալ մայր փայտէ ու ուղնիազէ էին:

( ՄՆԱՅԱՆՆ ՈՒՐԻՇ ԱՆԳԱՍ )

---

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԳԼՈՒԽ Զ.

Սարգոսս կազմուածքին վրայ արբիւր առնելով եղած գոգոխոտութիւնները:

ՍՈՐ ծնած տղան սովորաբար 19<sup>էն</sup> ինչուան 21 բթաչափ երկայնութիւն կ'ունենայ և ութէն ինչուան ինը լիպրէ կը կշռէ: Բիւն ատենի մէջ մարմինը կ'աճի, թանձրութիւնն ու ծանրութիւնը կ'աւելնայ և սա աճումը գրեթէ ինչուան քսանըմէկ տարեկան ատենը կը բշէ: Երիկ մարդուն հասակը գրեթէ հինգ ու կէս ոտք հասնելէն ետև կը դադրի, կնիկ մարդկանը ինչուան հինգ ոտք, շատ անգամ հնգէն վար կը մնայ քան թէ վեր: Բն տարիքին մէջ մարդուս կերպարանքը ինչպէս որ պէտք է կը ձևանայ, մարմինն ու անդամները աւելի կ'ընդարձակին, և ութը իր վերջի աստիճանին կը հասնի. ու երբոր քսանըհինգ կամ երեսուն տարեկան կ'ըլլայ, ան կազմուածքը կ'առնէ որ ինչուան ծերութիւն պիտի պահէ:

Ներութեան հասնիլը շուտ կ'իմա-